



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

~~W. H. G. F.~~




1888

II 53.

2010

ՄԻ ՔԱՆԻ ԽՈՍՔ

ՀԱՅ ԿՐՈՆՈՒՍՈՑՑՆԵՐԻՆ



ՍՈՀՈՆ ՔԱՀԱՆԱՅ ՍՈՀԱԿԵԱՆՑ

1208

Այ -

Ակրեր.

760

Տ Փ Խ Ի Ա

Տպաբան Մ. Գ. Ռառինեանի

1888

2(02)

4-15

(36 Գթօնի)

ԳՈՐԾ ՎԵՐԱԿՐՈՒՅԹ

Дозволено цензурою Тифлисъ. 31 Августа 1888 г.



760-2010

(4346
41)

(20ԿԿ-60)

Типография М. Д. Ротиняца на Гол. просп. дом № 41

Խ8755

ՄԻ ՔԱՆԻ ԽՈՍՔ¹⁾

Անուրանալի ճշմարտութիւն է, որ ոչ մի երկրախն իշխանութիւն չէ կարողացել մինչև աւտօր կրօնի սրբութիւնը իւլելու մարդկանցից. Ոչ բանակալ իշխանների սուրբը, ոչ թեհեամիս գիտնականների ծաղը, ոչ մոլորեալ աստուածաբանների կրօնական վիճերը կարողացել են կորպել մարդոց սրանքի խորքից՝ նոցա գէպի Աստուած ունեցած խաղաղ անձկալքը: Բոնաւորի արիւնուտ սուրբն, այն, կարողացել է այս կամ այն աստուածաբանական տեսակէտը փոխնել տալ, այս կամ այն եկեղեցուն տիրապետող իրաւունքը չնորհնել՝ քանդելով միւսը, այս կամ այն ճշմարտութիւը մոլորութեան մառախուզով սքօղել, բայց կրօնը ամենայն ժամանակ սրեին է չնմանել, որը թէն երբեմն-երբեմն ամպերի տակն է մտել բայց երբէք չի խաւարել չի շիջել Փոմորիկները մոնչալով անցել են, ու կայծակնալից ամպերը ցրուել են և ճշմարտութեան արեգակը կրկին ճառագալթել է կապուտ երկնակամարի վերալ: Անցեալ փոմորիկները չօգուտ մարդկութեան ծառին միան այն հետեւանքն են ունեցել, որ նորա վերակ եղած հիւանդ պատողները թափել են և առողջների կապն աւելի ամբացրել: Աւապէս է եղել մինչև այժմ, ապագէս պիտի լինի և ընդ միշտ: Կ ր օ ն ն ե ր ը (Կ ը-

1) Այս տողերն խեկապէս իմ «Դասագիրք կրօնի» գրքի յաւագանի առաջին մասն է, որը առանձին գրքով լրջութեան մեջ լույս է բարձրացվել: Աւստի «Դասագիրք կրօնի» գործածողներին և ընթերցողներին ինպուտ եմ այս «մի քանի խօսք հայ կրօնուսու յցներէն» երկառող գրքին առաջին և անընդան մասը համար է եւ:

բ ո ն ա կ ա ն ու դ դ ու թ ի ւ ն) կ փ ո խ ու ի ն, բ ա ւ ց
կ ր ո ն ը մ ի շ տ կ մ ն ա վ:

Ի՞նչպէս է լառաջանում այդ: Ով իւր աչքերը դիտ-
մամբ չէ փակում ճշմարտութեան առաջ, ալ քննում է
իւր սեպհական ներքին հոգեսոր գողութիւնը, նոյնպէս և
իրան շրջապատող անհատներինը և մի խորը քննական
հայեցք է ձգում մարդկութեան պատութեան վերայ,
նա անշուշտ կիրառովանի, որ կրօնը անհատների կամքի
պառուղ չէ, ալ մի ընդհանուր մարդկավին՝ նախառահմա-
նեալ և անօրինեալ վիճակ է մարդոց հոգեկան աշխարհի
համար—ամենայն ոք զգում է ներքին կերպով, որ նա
կախումն աւնի մի բարձրագուն չակից—կախման զգացումն
ամենի մէջ անժխտելի է: Կրօնը մի օտար՝ պատուաստած
ձիւղ չէ մարդկութեան ծառի վերակ, նորան չէ ծնել քա-
հանապական խնամակալսութիւնը կամ մարդական ներգոր-
ծութիւնը, ալ նա բղիսում է իւր նախնական ուժով հէնց
լերան խորքից՝ մարդկավին սրտի խորքից—նա պատկա-
նում է մարդոց ներքին զցութեանը: Սորա համար ես
կրօնական վիճակը կարելի է սերմի հետ համեմատել,
որը հանդէսում է մարդոց կրծքի խորքում և ըս-
պասում է գարնան ջերմաքեր սիրուն, հեղ և անձկա-
տելի կերպով անող զատալարակութեան և բարուականու-
թեան ճշմարիս զեփիւռին, որպէսզի զօրանակ և ծաղիկ
ու պատուղ տակ ամենայն ժամանակ և լաւիտեան: Այս կրօ-
նական նախասահմանեալ վիճակին ենք պարտական, որ
մարդոց հոգին զգում է աստուածավինը: Այս կրօնական
վիճակից ծնում, սկիզբն են առնում կրօնական համոզ-
մունք ասսածները: Այս իրողութիւնը երկրագնդիս բոլոր
աղքերի մէջ նկատելի է, միան արտակարտութեան ձեր
տարբեր է—ումանք իրանց ներքինը արտակարտում են
խօսքով, ումանք այս կամ այն շարժողութեամբ և ումանք
իրանց սովորութիւններով: Որպէս մի անեղբ ծով կրօնը

տարածում է աշխարհիս բոլոր մասերում—Զինաստանի
ծովափունքից մկում է նա՝ անցնելով Հնդկաստանի մար-
գագեատինները և համառում է մինչև արևմուտքի վերջին
սահմանը—ալս անհուն տարածութեան վերաց նա երևում-
է մեղ ամենուրեք բաղմատեսակ արտակարտութիւններով:
Ափրիկակի անապատների խորքերում, ուր զեռ ոչ մի եւ-
րոպացու ոտք չէր շօշափել, ճանապարհորդները գտել են
կրօնական մտապատկերների և սովորութեան հետքեր, ո-
րոնք թէն մաքուր չեն և աղօտ քողով են պատած, սակայն
կրօնական կենաց սկիզբն են. այսուեկ թէն կրօնի լուսը
մարդկանց սրտի խորքերն իրան լատուկ լուսով դեռ չէ
լուսաւորել և աղատել նրանց զանազան մոլար և թիւր
ըմբռնողական ձեւերից՝ նախապաշարմունքներից, բայց ա-
մեն մի երեսով ամեն մի արտակարտութեան մէջ երե-
սում է, որ մարդկի ներքնապէս, անգիտակցաբար ձըգ-
տել են, ձգուում են դէպի Յաւիտենականը:

Ինչ օրէնքով որ մի ա զ գ կրօնական զարգացման այս
աստիճանն անցնում է, նոյն օրէնքին ենթակաց է և ա ն-
հ ա տ ը: Ո՛չ մի հասակ մարդուս մէջ չի անցնում առանց
կրօնական զարգացման, ամենայն հասակում կրօնը ցոց է
տալի իւր ներգործութիւննը մարդուս վերաց Ուր որ երե-
խակ մէջ սկսում է կրօնական հետքերի այս արշալուսը,
անտեղից էլ սկսում է նորա կեանքի սրբութիւնը: Կրօ-
նական զգացումն է, որու չնորհիւ ա չ ր մ ա ր դ ը ը ը նկ-
ճում է երկրատոր վշտերն ու տառապանքները. այդ միե-
նոն զգացումն է, որ կ ի ն մ ա ր դ ո ւ ն մ ի մ ի թ ա ր ո ւ մ է իւր
սիրելու գերեզմանի վերաց ծունդ չոքած րոպէին: Եւ երբ կեան-
քի արեը խոնարհում է, այն ժամանակ կրօնը գերեզմանի
ափին կանգնող ծ ե ր ո ւ ն ո ւ համար մի թանկագին լապ-
տեր է, որի աղօտ լուսը ապագափի գաղտնիքը՝ խորհուր-
դը լուսաւորում է և որպէս մի աստղ առաջնորդում է նո-
րան՝ իւր թափառական կեանքի մէջ՝ հաւասից դէպի տե-

սահմալն՝ դէպի հաւատացեալ իրկրի հաստատութիւնը⁽¹⁾: Երբ մարդու կ և ո նք ի մէջ իւր վէճարանը կրոցնում է, այն ժամանակ ևս մարդը լի չուսով դէպի կրօնի զեկն է ձեռք մնենում և նորա մէջ է վճառում ապագափի՝ հանգերձեալ կեանքի զօրսութիւնը, ամեր, միսիթարութիւնը և օգնութիւնը: Եւ այս նախապէս զգալը, այս ներքին անձկութիւնը և որոնումն ամենքն էլ ունին—թէ միլիօնատէր ի չ լս անը և թէ օրական պարենի կարօտ ա զ ք ատը: Ոչ մի զանալանութիւն չկատ ասողերը չափող գիտնականի և համարերի մէջ երկրիս խորքում պատառ: Հաց աշխատող մշակի մէջ: Ամենքն էլ թէ բարձր գիտութիւն ստացողը և թէ ուսմիկ շինականը՝ մինի մէջ զօրեղ միւսի մէջ թուլ ունին կրօնական զգացումն և համարումն: Անօթի մարդուն չէ կարելի սպացուցանել, որ նորա տովածութիւնը երևակաւութիւն է: Փորձի՛ր տալու նորան քարի կամ ուկու կառոր, նա քեզ խկոն կապատամանէ, որ դա իմ փորը չի կշռացնի, և ա ց է հարիսաւոր: Այսպէս ևս մարդկափն սիրոն է փափագում ձգտել առ Աստուած և մարդու չէ հանգստանում, մինչև որ իւր հանգստութիւնը նորա մէջն է փանում: Խնչպէս որ իւրաքանչիւր մորդակ իւր արեի շուրջն է պատում, ինչպէս որ կողմնացոցի սըլաքը միւս դէպի հիւսիս է հակում, մինչև որ վերջապէս աղդ ուղղութեան մէջ իւր հանգիստն է գտնում, արսպէս և մարդկապին սիրու հակումէ դէպի բոլոր կենդանութեան չաւիտենական կենտրոնը և վիճառում է Աստուծուն՝ մինչև որ գրնում է: Մարդն ալլագէս չէ կարող, որովհետեւ մի տեսակ պահանջ է նորա համար—միանալ Աստուծուն հետ: Սա մի դիմ է մարդկապին բնութեան մէջ, որը ձըգում է մինչև Յաւիտենականը: Մարդուս այս ներքին ձըգումն կարելի է համեմատել հ ա ց ր ե ն ե ա ց կ ա ր օ տ ի

⁽¹⁾ Թ. ա. Երբ. Ժա. 1. օջի՞նչ են հաւատք, եթէ ոչ յուսպելոց իրաց հաստատութիւն:

հետ, որը սափառում է, անհանդիսա է անում մարդուս տեսնելու ան հագենին, այն գոյութիւնը, որի պատկերը իւր սրտի մէջն ունի: Աստուծու և մարդկանց մէջ մի տեսակ կազ կատ, ինչպէս և մարդկանց մէջ արեան աղջակցութիւնը սերա կապում, չաղիկապում է սրտերը միմնանց հետ⁽¹⁾: Մարդոց և Աստուծու մէջ ձ գ ո զ ու թ ե ա ն մի օրէնք կատ, ինչպէս երկրի և իւր վերաս եղած իրերի: Մարդկանկարութ են այս օրէնքին զիմաղրել: Կարելի է բ ո ն ե լ, որ քարը չընկնի, բայց հէնց որ թուլ ենք տալի, իսկան բնա թեան ընթացքին է հետեւամ: Բ ո չ ս ի ն, որը ավոր է իւր տերենեները դէպի իրան կեանք տուող արմը գարձնել: Կարելի է ազ ուղղութիւն տալ, բայց կարծ ժամանակից լիստ կրկնն կծառէ դէպի լուսը: Կ ո ղ մ ն ա ց ո չ ց ի ս լաքի ուղղութիւնը կարելի է փոխել, բայց հէնց որ ազատ թողնենք, իսկոն զորդողազով որոնում է հիւսիսակին բեկուը, այն կէտը, ուր նա միան հանգստութիւն է զանուամ: Այսպէս և մարդկափն սիրոն է: Նորան կարելի է ս խ ա լ ուղղութիւն տալ, սիրաը կարող է սըխալուել, մոլորաւել, խարուել, կարող է նիւթալաշո վինել, մինչև անգամ ամենասարքին, ամենաչնչին իրի հաւատալ, սական դարձեալ անհանդիսա է ծանրաբեռնուած հոգսերպի: Անհանդիսա սիրաը խալազութիւն է վիճառում ինորու և իւր փնտուածը նա Աստուծու մ ի ջ ն ո ր զ ու թ ե ա մ բ, Աստուծու մ օ տ և Աստուծու մ է ջ միան կարսպանում է գոնել:

Հոգւու այս ձգտումն առ Աստուած, հայրենեաց այս կարուո՞ւ է հ ի մ ն բոլոր կրօնեների: Ասանց այս ձգտման չենք կարող ձանաչել Աստուծուն, չենք կարող փնտուել և

⁽¹⁾ Գործք առաք, Ժէ. 28. «Նա՞ եւ ոչ կեռի իսկ է յիւրաքանչիւր ումեքէ իմհնջ, զի նովու կեամք և շարժիմք և եմք որպէս ունանեք ի ձերց Նախարարաց ասացին, թէ նորու և ազգ իսկը:

գտնել նորան: Ուստի և այն ա ն ձ ն, որը կրօն չէ ընդու-
նում, կրօն չունի, պատկանում է այն եղական անհատներին,
որոնք որ և է բնական պարզապեթիւն ունին և կամ որոց
հոգեկան զարգացման վերաբ որ և է ճնշումն է գործ դըր-
ուել և կամ վաստ շրջանի մէջ են ծնել և մնել Շատ կաս-
տել և կամ վաստ շրջանի մէջ են ծնել և մնել Շատ կաս-
տել է, թէ արդեօք, այսպէս անտառնուած անսաստուած-
կածել է, թէ արդեօք, այսպէս անտառնուած անսաստուած-
ների մէջ ևս լինի մէկը, որը խր միանութեան ժամերին՝
խր հոգուոյ համեղման մութն անկիւններում ևս Աստուած-
գոյութիւնը վճռապէս ուրանաւ և առանց հաւատի և լոսի
կնքէ խր երկրաւոր կեանքը, Ալգալիաթիքն, այս, ունին ի-
րանց մէջ կրօնական համեղումն, սական անմեղների մօտ-
Մեֆիստօֆելի դեր են կատարում՝ առանց խղճահարուելու:

Մի ալսալիսի հոգեկան վիճակ՝ ինչպիսին կրօնականն
է, որ ունի ալտափիսի ո է ժ. և զ օ ր ու թ ի ւ ն, ալտափիսի
ընդարձակ ծ ա ւ ա լ, որ ամփոփում է ա մ բ ո ղ ջ մարդ-
կութիւնը՝ բոլոր անհատներով, իրաց առեալ բնական պա-
կասութիւն ունեցող անձինքը, ամենալի իրաւամբ անհը-
րաժեշտ պիտի համարուի կ ր թ ո ւ թ ե ա ն գործում: Ով
որ դաստիարակական հարցի մէջ այս ներքին, հոգեկան
վիճակը ի նկատի չէ առնում, մոռանում է, անուշադիր է
թողնում, ալգալիսին հակառակում է ներդաշնակ կրթու-
թեան սկզբունքին: Ով որ դիտմամբ անտես է անում այս
կարեոր կէտը և կամ ճնշումն է գործում նորա վերաբ, մէ-
կարեոր կէտը և կամ ճնշումն է գործում է խր հետում
դէմ:

Ա ո ա ջ ի ն տարիներում ա ն կ ա ր ե լ ի է այս կը-
րօնական վիճակը միանգամից զարգացնել երեխաների
մէջ, վասնդի մարդս աշխարհ զալով բերում է խր հետ

մի ալնալիսի սաղմ, որը տարիների ընթացքում միան
և հանգամանքների ներքու աճում և զարգանում է: Երեք
տարեկանից վաղ ալսինքն այն հասակը, երբ երեխալի
մէջ ի ն ք ն ա գ ի տ ա կ ց ո ւ թ ի ւ ն ը դ ե ռ չէ զարթել,
երբ նա (ես) ասածդ չէ որոշում, անկարելի է նորան իս-
կապէս հոգեկան կերպով զգալ տալ անտեսանելին: Ալդ
միենան է, եթէ մենք խելազարին, որը չունի ալդ ինք-
նագիտակցութիւնը, դաստիարակութեան արուեստով կրօ-
նական զգացումն աշխատէինք էառաջացնել: Եւ իրօք
մարդս նախապէս պէտք է զգաւ այն ոգին ի ւ ր մ է ջ,
որը ւետու ի ւ ր վ ե ր ա չ սաւառնելու է: Ալստեղից պարզ
հետեւում է, թէ առաջին երեք, չորս տարիներում ի ս-
կ ա կ ա ն կրօնական դաստիարակութեան մասին խօսք չէ
կարող լինել: Նուն խակ էաջորդ տարիներում չպիտի հան-
կարծակի սկսել, ալզ հ ե տ զ հ ե տ է, որպէսզի մատող
բարեպաշտութեան բնքուց բույս չփչանաւ: Մի բարեպաշտ
և սուր դիտողութիւն ունեցող անձն իրաւամբ նկատել է թէ
պատանեկալիսն տարիներում որքան կարելի է բարեպաշտ
ուսուցիչ պիտի ունենալ և սակաւ կրօնի դաս: Ով որ կը-
րօնական դաստիարակութիւնը իսկ ժամանակից վաղ է
սկսում, շատ սիսալում է: Ալգալիսին թերևս մանկան
անտեղ հասցնէ, որ նա ձեռքերը երկինք բարձրացնէ,
չօքէ, ծունք դնէ, շրթունքներն աղօթքով բարախեն, բացց
թո՞ր նա երբէք չկարծէ, որ խր սանը (ծշմարիս, երկըր-
պագուք երկիրպագանիցին հօր հ ո գ ւ ո վ և ծ շ ա բ ը բ-
տ ո ւ թ ե ա մ բ) ներիցն է*):

Կրօնական վիճակը զարգացնելու համար դաստիա-
րակը, ասացինք, էարմար ժ ա մ ա ն ա կ (հասակ) պիտի

* Աւետարան Յովլ՛, գ. 13.

ընտրէ. սա նշանաւոր կէտ է. Պակաս նշանաւոր չէ և այն հանգամանքը, թէ ինչ ձ և ով և եղանակ ով պիտի ազդել լոգուս նոյն հոգեկան վիճակի զարգացման:

Կրօնական զարգացման վերաէ երեք հանգամանքներ ապդում են ա, բ ու թիւն (արտաքու մարդկալին) բ, անցեալ կեանքը, ինչ որ գլխովն անցել է և գ, մարդկական դին դիտաւորեալ ներգործութիւն։ Այս նպատակի համար տար' երեխալին Աստուծու մեծ տաճարը՝ բ ու թ ե ան մէջ—այսուեղ նկատել տուր երկնից անսահման տարածութիւնը, ուր միլիոնաւոր աստղերն են փալում և որոնք կարծես ասում են մարդուս, տե՛ս, սա էլ մի նոր աշխարհ է, մի տեսակ հայելի է, որի մէջ արտափալում է երկնալին աշխարհը։ Յո՛ց տուր արշալուի և վերջալուի սրանչելի տեսարանները, կայծակի փալուատակիլը, ամպի գոտոցը, մըրկի մոնչիւնը, անտառի սօսաւիւնը, գարնան ծաղկալից ծովը և պտղառատ աշնանալին բնութիւնը։ Այսուեղեն առաջնորդի՛ր սանին դէպի մարդկանքը կ են կեանքը — յո՛ց տուր նորան այնտեղ անցեալ մարդկութեան բարձր և դամելի ձգութ ու մն երը, մարդկալին կ ե անք ի տկարութիւնն ու թուլութիւնը։ Թափանցել տուր նորան մարդկալին պ ատմութ ե ան խորքը և յո՛ց տուր, թէ ինչպէս ազգերի կեանքի մէջ երևում է աստուածալին զօրութիւնը՝ Բարձրելու աջը։ Սանիկն անշուշտ կզարմանաւ—հրաշքով լի իրողութիւնները կազդեն նորա սրտի վերաէ. սաներն անշուշտ կհարցեն—«ո՞րանդից» է այս և «ի՞նչու» են այս բոլորը։ Այս զգացումն դէպի աստուածալինը հետզհետէ որպէս արշալու հճառագութէ նրանց հոգու առաջ, և առա ու է այն կէտը, այն հմենաքարը, որի վերաէ ապագավ բոլոր կրօնական զգացումները պիտի բարձրանան։ Երբ սաները կունենեն, թէ ինչպէս մարդկալին կեանքն անցաւոր է, երկրաւոր իրերի վերաէ լուս դնել չի կարելի,

ամենալին ինչ անհասանա է. Երբ սաները կահանեն որ ոչ ոք ապահով չէ՝ նոյն իսկ ապահով համարուածները, իմաստուններն անգամ ենթակաէ են այս վասնգին, հրզորները ևս չեն կարող խուսափիլ գալոցից. Երբ կաւոնեն որ երիտասարդութիւնը փթթում է որպէս մի ծաղիկ և ժամանակը երազի նման անցնում է, այն ժամանակ նրանց մէջ ակտամաց կզարթէ այն կրօնական զգացումն, որով սաները աւելի և աւելի ենթարկուած են զգում մի ազօտ զօրութեան—զա կախման զգացումն է, որը թէն դեռ կրօն չէ, բայց այն ու զին է, որը ասմում է դէպի կրօն։

Այս բալորը սաների համար մի տեսակ թանձրացեալ կեանք է, կենդանի նկատողութիւնն, ուստի և խիստ կարևոր։ Բայց ինչ է անում մեծամասնութիւնը—սաների միացն ու հոգին մաշտում են անթիւ ու անվերջ վը կախութիւններով, որոնք երեք ընդունակ չեն սիրու շարժելու և ազնուացնելու։ Կրօնն սկզբում դեռ խստավանութիւն, ձանաչողութիւն չէ, այլ մի տեսակ ըդգ տ առ ու թիւն, նա զաղագար չէ, այլ զ գ ա ց մունքը։

—

Մենք տեսանք թէ բնութիւնը և կեանքը ինչ վեր են խաղում մարդուս կրօնական զարգացման հարցում, բայց բնութիւնից և կեանքից աւելի մեծ արդեցութիւն ունի զիտաւուր եւ ներգործութիւնը—արհեստական կերպով են աւելի կարելի է սէր ներշընչել զարգացման ընդունակ ասնի մէջ։ Ակնդիցին, ընտանիքը և գպրոցը մեծ կոչումն ունին ալսոնդ։ Ընտանիքը ի վերաէ մասնաւորապէս ծանր պարագ է

դրաւմ՝ որպէս առելի ընդունակի վերակ, որովհետեւ ծնողները առաջին և ամենամեծ ուսուցիչներն են կը բանի և երբ մի քրիստոնեակ բարեպաշտ ընտանիքի մէջ մանկան սրտում չաւասող կագծը կվառի և աւապէս բնական ձանապարհով կղարդանակ. երբ մանուկը ընտանիկան տարկի տակ քրիստոնէական սիրու խօսքեր կլաէ և երրեք զորա հակառակը. երբ ծնողաց կինդանի օրինակով մանկան մէջ նոյցա հետեւելու ըգացմանը կղարթեցնուի. երբ աւս սուրբ, մաքուր, բարուական սովոն, ձշմարիս բարեպաշտութիւնը իրօք կը միաւորուին և տաճախակի կրկնելով նրանց մէջ երկրորդ բնաւորութիւն կղարճուի, այս ժամանակ առել է թէ ապագայ կրօնական զարգացման հիմնաքարեւ դըրած է: Ընուանիքի մէջ վճռական դեր խաղացողն աւս հարցում անշուշտ մ'աւ ը ն է: Արդեօք ով կասկած ունի այս ձշմարտութեան վերակ: Ոչ ոք: Հէնց դորա համար էլ բարեպաշտ մանկավարժներից մինը՝ (Պետալոցի) բարեպաշտ մօր բերանով ասում է բարեպաշտ Գերակուախն. «Մի Աստաւած կաէ, որին զու կարիք ունիս, որը քեզ իւր բաղուկների մէջ կընդունի, երբ ևս մանկարող կլինիմ քեզ տալու»: Ահա՛ քեզ մի բարեպաշտ, մի ի՞սկ մաքր, որը մանկան մէջ՝ մանկան հասկացութեան հաւաձան սուրբ զգացմոննքներ է ներշնչում և սորանով այդ զգացմոնքին բաւունական ձշմարտութեան բառուկ կերպակուր է տալի վճիտ և հարազարդութիւն:

Տարաբաղդաբար մեր նիւթական դարում շատ ծնողներ բարձի թողի են անում իրանց որդուց կեանքի այս ոսկէ ծաղիկ հասակը: Նատ ընտանիքներում կրօնական դաստիարակութեան տեղը զ ա դ ա ր կ է և կամ առել ձիշտ առելով՝ զատարկ տեղ չկաէ կրօնական դաստիարակութեան համար:

Մի քանի ընտանիքներում ա զ ք ա տ ո ւ թ ի ւ ն ն է արգելք լինում, միւսում հ ա ր ս տ ո ւ թ ի ւ ն ն է խանգարում, երրորդում անտարբերութիւնը... Ակո՛, ընտանիքը մեղաղեկի է, նա շատ բան պիտի անէր, քիչն էլ չէ անում—«որում շատ տուաւ, շատ խնդրեսցի ինմանէ», Սորանով մենք չենք կամենում ուսուցչին բոլորովին անպարտ կացուցանել, թէնա ոչինչ չի կարող անել, ընդհակառակն՝ սորանով ուղարմանը ասել ամենան ծանրութիւն տանող ուսուցչին և պարտառել, որ նա իւր պաշտօնի ծանրութիւնը զգան, իւր կրելիք բեռան մեծութիւնը նկատէ: Սորանով մենք ուզում ենք ասել ուսուցչին, որ նորա վերակ է մնում ընտանիքի բեռը—ինչ որ ընտանիքը անտարբերութեան է տուել, չէ կարողացել տալ, զու պէտք է բոլոր ոչինունիղ մաքառես և թէրին լրացնես: Մենք սորանով ուսուցչի վերակ պարտք ենք զնում: իւր պլիւտ ներփործութեամբը ընտանիքի մինուս ներգործութիւնը չէղոքացնելու:

Այսուեղից խնդիր է ծագում, արգեօք ուսումնաբանը ինչ միջոց պիտի գործ դնէ, որպէսող կրօնական զգացումն մասուղ հասակի մէջ զօրացնէ: Երբեք չպէտք է մոռացուին ավս երեք հիմնական պակմանները—ա, ուսուցչի բարի օրինակը, բ, ուղբոցական կարգապահութիւնը և գ, կենդանի դասաստութիւնը:

ա, Ուսուցչի բարի օրինակն ամենից մեծ տակառութիւնն է թողնում մասուղ սրտերի վերակ, սա ամենաձեռնուս միջոցն է սաների մէջ կրօնական ողի ներշնչելու զգրոցում: Հերոսները պատերազմի մէջ նորանով են սաղթութիւն ձեռք բերել, որ իրանք ևս որպէս հասարակ զինուոր կռուել են: Ակսակս և ուսուցչիը աշակերտ վերակ ոչ թէ նորանով է ազգում, թէ ինչ է առում, ալ նորանով՝ թէ ինչ է անում: Կթէ երեխան

բալորովին փշացած չէ, զառ չէ մեծացած, ուստիցի ամենայն մի վարժունքը իրան իրեւ օրինակ է ընդունում, ուստիցիչը իւր իդէալն է, որին միշտ հետևում է. ուստիցի բոլոր խօսքերին հաւասում է—ինչ որ նա զործում է, արդարացի է, ինչ որ նա անում է, լաւ է, բարի է—ուստիցիչը աշակերտի համար մարմանացեալ կրօն է: Փոքրիկ սաներն ամենայն ուշաղրտութեամբ լուսմ են, նկատում են նորա ամեն մի շարժուածքը, խօսքը և ամբողջապէս նորա հոգու ձեն ու կերպարանքն են ընդունում: Ուստի սրագան պարտք կատ ամենայն մի ուստիցի և զարսցում պաշտօն վարող ամձնի վերա՛ նոյն խսկ ար ու աք ին (որ, շարժողութիւն, հանեացք....) վարեցարաւթեանց մէջ զգուշ վիճելու: Եթէ արտաքինից աւսպէս զգուշանալու է, որքան ևս ն երք ին ի ց: Ուստիցիչը պէտքէ աշխատէ, իւր ներքինը ամենայն մի ագեղութիւնից գերծ պահպաննելու, արդեղ լատկութիւններն ազնուացնելու, կասարելապործելու և առաքինութեան սահմանին մօուցնելու թէ խօսքով և թէ գործով, թէ զարսցում և թէ զուրսը պիտի աշխատէ նոյն հեղինակութիւնը պահպաննելու և ոչ միայն զասատան մէջ, խսկ գործը գործով իւր քարտածի հակասակն անէ— աշակերտն ամենուրեք նոյն անձնաւորութիւնը պիտի ձանաչէ ուստիցի մէջ: Միայն ա՛ւս ձեռվ, ա՛ս բնական ձանապարհով կարելի է սանձել սրակը, ազգել ներքինի վերաէ և իրան հետեւնելու ձգուամն ծննդնել նրանց մէջ: Մի ադսլիսի օրինակիվ ուստիցի ինարկէ ան անձնաւորութիւնը կարող է լլնել, որը կ թօն ը սր ու ու մն ու ն ի, որովհետեւ ինչ որ մարդու չ ու ն ի, չի կարող ուրիշին տա լ: Ինչպէս որ խ ե լք չ ու ն եց ո գ ը ուրիշին խելք չի կարող տալ, ինչպէս որ բնաւորութիւն չընեցողը չի կարող ուրիշի մէջ բնաւորութիւն հաստամէլ, ազատէս և սրտի վերաէ չի կարող ազգել ան ուստիցիչը, որը սիրո չունի. որիշի մէջ սէր չի կարող լարուցանել, երբ ինքը

սիրուց զուրկ է: Ով ծնող չէ եղել, հազիւ թէ սէրը իւր բոլոր լատկութիւններով ճանաչէ, ով ծնողական սէր չունի, որը զիտէ և սիրել և պատժել հազիւ թէ կարողնակ ուստիցիչը բոլոր լատկութիւններն իրան սեպհականնել: Անձնասէրի մէկը կարող է զանազան գերեր խաղալ—մեծամեծ հետեւանքներ ցուց տալ քննութեան ժամանակ, բաց քրիստոնէական կրթութեան ձշմարիտ պատղներ, քրիստոնէ ա բ ա ն է ա բ ա ր մ ա մ ա ծ է և ք ր ի ս ա ո ն է ա կ ա ն ո գ ի ն, որն ալդպիսի ցուցահանգէմներ չի սիրում, չի ընդունում, հազիւ թէ կարողանաւ իւր սաների մէջ ներշնչել: Աւս տևսակ սխալ քրիստոնէական ներքործութեան հետևանքը նմանում է այն փառած նիւթի լուսին, որը թէն լուսաւորում է, բաց ջ ե ր մ ո ւ թ ի ւ ն չունի: Ինչպէս որ նկարչութեան ուստիցիչը նկարել պիտք է գիտենայ, թուաբանութեանը հաշուել..... ադսպէս և կրօնի ուստիցիչը՝ սիրել, որախետեւ կրօնն ամբողջովին սէր է և ալդ սէրը պէտք է արտավարուի և ուստիցանելիս և զասակարկելիս, և՛ խօսքի մէջ, և՛ զովասանքի և պատմի ժամանակ: Երբ Քրիստոս Զիթենեաց լերան վերալոյց Երասմաղեմի համար ամենախիստ խօսեց, նորա աչքերը արտասառքով լցուեցան:

Սիրու հետ ճ շ մ ա ր տ ո ւ թ ի ւ ն ն ևս անբաժան պէտք է լինի: Ուստիցիչը ճ շ մ ա ր տ ո ւ թ ե ա ն տիպար պիտի լինի, կրօնական սէրը նորա սրտի և կեանքի խորքից պիտի բղխէ, սկիզբն առնէ: Եթէ ուստիցի խօսքերը զուրկ են ձշմարտութիւնից, կեղծ են, որքան էլ բարեպաշտ ձևանակ, աշակերտներն անուամինանիւ իսկոյն նկատում են ալդ, խկոյն հասկանում են, որ սա քրիստոնէական ձշմարտութեան օրինակ չէ: Աւելի ցաւալի և վտանգաւոր հետևանք ծնող հանգամանքն այն է, երբ ուստիցիչը այն է քարտում, ինչին որ ինքը իւր բոլոր գործներթեամբ հակառակում է. վտանգաւոր է երբ նա

Սուրբ գրքի վերաէ պակասամտութեամբ է նախում. երբ Սուրբ գրքի հեղինակների մասին դրական համոզումն չունի, այսինքն երբ նա իւր արմատական—վեղափոխական և ուղղափառ—պահպանողական կարծիքները ևս ներմուծում է, և կամ մարդկանցից երկնչելով՝ ժամանակի ոգու հետ շարմարուելով՝ ճշմարտութիւնը կերպանափոխում է: Բայց աւելի վտանգաւորը և ցաւալին ան է, երբ ուսուցիւ սիրութ է կրքով, երբ նա ոսով գլխով կիրք է խաղաղութեան վերաէ է խօսում, երբ ներքինը լի է՝ մեծամտութեամբ, քրիստոնէական հեղութիւն է քարոզում, ցաւալի է վերջապէս երբ սէրը դառնասիրտ ատելութեամբ պիտի ուսուցանուի: Այս տեսակ վարմունքները կատարեաթուն են սաների համար, ուստի և ամենաչնչին հանգալ մաճքներում պէտք է կշմարիտ լինել: Ինչ բան որ դու ճշմարտութիւն չես ընդունում, աւելի լաւ է քո աշակերտներին չսովորցնես, աւելի լաւ է քիչ բան ճշմարտութեամբ ուսուցանել, քան թէ շատ բան չհաւասարով, ստախօսութեամբ: Եթէ մինը քաջութիւն չունի ճշմարտութիւնը սիրելու և արդար խոճի ձանին հետեւելու, անպիսին աւելի լաւ է որ կրօնի ուսուցիչ չլինի, այդ դասակարգին պատկանող անհատը ուսուցիչ անուանը արժանի չէ, դաքա վարձկաններ են Ի. թուղթ առ կրնթ. գլ. ժգ. և Ի. թ. առ Տիմոթ. գլ. դ. 12. ամենան մի ուսուցիչ պէտքէ լաւ կարդալ և իրա համար միս և արին դարձնէ:

Բ, Սովորութիւն է մեր մէջ, տարաբաղդաբար, որ աշակերտների տառաջադիմութիւնը կրօնի ուսման մէջ որոշում են միմիան նորանով, թէ ինչ գիտ է սանը—նորա գիտութեան չափը կրօնի մէջ թուանշաններով են որոշում և նոցանից ^{0/0} դուրս բերում: Այդ իրողութիւնը ցաւալի է և աւելի ցաւալին ան է, որ այդ իրողութիւն է: Կրօնի տառաջադիմութիւնը աշակերտների վար մունքի և զգացման մէջ պիտի որոնել և ոչ

թէ գիտեցածի: Օրինակ ելի կարգ ապա հութիւն դպրուց ի մէջ, կամաւոր ուշադրութիւն սաների կողմից, անընդհատ աշխատասիրութիւն, ինքակամ հնագանդութիւն, անկեղծ բարեպաշտութիւն—ահա այն պտուղները, որոնք պէտքէ տակ քրիստոնէական կրօնի ուսուցումները: Ուր այս պտուղները նկատելի չեն, ուր կրօնի լառաջապիմութիւնը սաների ներքինի՝ հոգւոյ արտաքայտութեամբ չէ որոշում, այդ առաջին նշանն է, որ կրօնի ուսուցումն իւր նպատակին չէ հասել: Արդեօք պատճառն ան է, որ ուսուցիչը բառացի կերպով է ծրագիրն անցել և կամ որտեղեւ կէտեր և տեղեր անգիր անելուն մեծ նշանակութիւն է տուել և կամ ուսուցիչը վառասէրի մէկը լինելով՝ աշխատել է որ այսքան բան գիտենան ու սկսել է կատեխիզացիան, որպէսզի քննութեանը փառաւորուի մարդկանցից, իսկ հոգւոյ՝ սրտի վերաէ աղղելը, թանձրացեալից գաղափարականն անցնելը բոլորին բարձի թողի է արել... այդ ողջ մէկ է: Ուր առանձին հոգ չէ դրվում սաներին աստուածապաշտութեան մէջ վարժեցնելու (1), ուր ուսումնարանի կարգապահութիւնը չի հետևում սաներին կրօնի ուսման համաձանկ եւ անք վարել առ լուս, ուր ուսումնարանի ամբ ողջ կազմակերպութիւնը—հոգ բարձող հոգաբարձուից սկսած մինչև վերջին ծառան չեն համապատասխանի կրօնի պահանջին, անտեղ բարի պտուղ չպիտի սպասել: Գ, Բացի ուսուցչի անձնաւորութիւնից և դպրոցի կարգապահութիւնից հարկաւոր է և մի երրորդ պալման—կենդանի խօսք, կենդանի դաստիարակութիւնը:

1) Ա. Տիմոթ. գլ. դ. 7. և 8. «Այլ է պիտի բանից եւ յառապելեաց պատասխանց կրօնմարեսչիք: Բայց կը թեա զանձն քոյ յաստուածապաշտութիւն, զի մարմայ կը թուաթիւն առ սակաւ ինչ ոգտակար է, իսկ տաստուածապաշտութիւն առ ամենայն ինչ օգտակար է»:

կ ե ա ն ք . Ն ե ր շ ն չ ո լ ուսուցումն, որի մասին
իրաւամբ նկատուած է—ինչ բան որ կիանքի մէջ ամենից կենդանի, ամենից աշխատ պիտի լինի՝ մեռած կերպով չպիտի աւանդուի և զարձեալ, ինչ բան որ ուսուցչի միջնորդութեամբ սաների մէջ պիտի գուանաւ, նույն պէտք է նախ ուսուցչի մէջ կենդանի լինի:

Որպէսզի կրօնի ուսուցումն կեանք ներշնչէ սաներին, ուրիշ շատ պացմաններ դեռ ևս հարկաւոր են քան թէ շատերը կարծում են—վարժապետ մարզը ուսուցական չնորհ ևս պիտի անենաւ, որը ընդունակ լինի աստուածավին ճշմարտութիւնը սաների հոգու առաջ այնպէս կենդանի կերպով նկարելու, որ սաները հոգւով աչքով տեսնեն այն՝ ինչ որ արտաքին ականջով լսում են: Դորա համար հարկաւոր է, որ խօսածը պ ա ր դ լինի¹⁾, ո՞ւր դ ի ւ ր ա մ ա ր ս, որպէսզի կարելի լինի սաներին աստուածավինը զգալ տալ, դէպի լաւիտենականը վերացնել մտօք, իսկ ամենից կարեորն այն է, որ կրօնի ասուցիչը լինի ք ր ի ս տ ո ն է ու թե ա ն զաղափարով ողմարտած, ման կ ա վ ա ր ժ ա կ ա ն հոգւով մնած և կրթուած—ուսուցիչ ասածդ առանձին սէր պիտի անենաւ դէպի ման ու կ ն ե ր ը: Այսպէս ուրեմն և այն ուսուցիչը միան, որին Տէրը հարցնում է, «Սիմոֆն Յաղնանու սիրես զիս», կարող է Պետրոսի հետ պատասխանել. «Այո՛, Տէ՛ր և դու զիտես զի սիրեմ զքեղո»: Այն ուսուցիչը, որի սրբառի մէջ այս սէրը կատ, կարող է արժանի լինել Քրիստոսի հարամանին. «Արածեա՛ զոշխարս իմ»: Ով սիրա չունի Քրիստոնէութեան համար, ում համար Խաչեցելու խօսքը զակթակդութիւն և լիմարտութիւն է²⁾) և կամ ով Սուրբ

1) Ա. թ. առ. Կընթ. Ժ. 19. «Այլ իմէջ եկեղեցոյն կամից բան չէնթ մաօք խօսիլ, զի եւ զայլս խրատեցեմ»: Քանի զբաղում բան լըզուաւ»:

2) Ա. թ. առ. Կընթ. Ջ. ա. 23. «Մենք քարոզեցուք զխաչելեան Քրիստոս՝ հըեւց դայթակութիւն, եւ հեթանոսաց յիմարութիւն»:

զիրքը այնպիսի բարեպաշտութեամբ չէ կարդում, ինչպէս մի երեխակ իւր հօր կտակը. ով Սուրբ զիրքը որպէս մի փաստաբան է ձեռքն առնում, որ մի կէտ գտնէ փանելու, այդպիսի անձինքը թո՛ղ երբէք չասեն, թէ իրանց աւանդած կրօնի ուսուցումն ք ր ի ս տ ո ն է ա կ ա ն է, ման կ ա վ ա ր ժ ա կ ա ն է, այդպիսեաց աշխատանքը նմանում է, այո՛, փասած նիւթի լուսն, որը թէն լոս է տալիս, բայց չէ տաքացնում:

Բացի գորանից որ կրօնի ուսուցումը քրիստոնէական ողի պիտի կրէ, հարկաւոր է որ նա և ման կ ավարժ օ ր է ն աւանդուի, զոր. սաների հասակ կ լ և կ ա ր դ ա ց ու մ ն ի ն կ ա լ ո վ ա յ ն պ է ս ա ր ե լ ո վ ա յ ն պ է ս ա ր ո ւ ի ն ո ւ ր ա ն կ ա ս ա կ ա ն ա մ ա ր, թէ ինչ ասել է կրօնը մանկավարժօրէն աւանդել, պէտք է քրիստոնէական կրօնի Հիմնադրի օրինակին հետեւնք, նա է բոլոր ու ս ո ւ ց ի չ ն ե ր ի ու ս ո ւ ց ի չ ը և ա յ դ ոչ թէ նորա համար, որ իւր ամբողջ երկրաւոր կեանքը Հօր Աստուծոյ կամաց նուիրեց, ալլ որովհետն նորա ու ս ո ւ ց ա ն ե լ ու ե ղ ա ն ա կ ը բարոր ժամանակի և բոլոր ուսուցիչների համար իրեմ օրինակ պիտի մնաւ: Ամենուրեք նա չէ մուանում վարդապետական կանոնը—հեշտից զժուարը, մօփից հնուան և ծանօթից անձանօթն անցնել: Ամենուրեք նորա աւանդածը այնքանը դիւրին է և հասկանալի, որ իւրաքանչիւր մանկան ևս մատչելի է և մի և նոյն ժամանակ անքան վսեմ և բարձր, որ զինականների զիսնականն էլ չէ կարող քննել և մնկնել: Ամենուրեք ուսանող անձնի սանի հասակը և զարգացումն ինկատի է առնում: Երբ ա մ բ ո խ ն ա չ ք ի առաջ

760 - 2010

ունի, խօսում է աճապատի շուշանի, տանիքի ճնճղուկի, զլսի մազերի վերաց, երբ փ ա ը ի ս և ց ի ն ե ր ի հետն է խօսում, հարցնում է. «Զի՞նչ է գրեալ չօրէնս», իսկ երբ նկատում է, որ իրան լսողները չեն կարող հասկանալ, առում է. «Եւ բագում ինչ ունիմ ասել ձեղ, այլ ոչ կարէք հանդուրժել այժմիկ» ձեզ շատ բան ունիմ ասելու, բաց այդ դուք հիմա չէք կարող հասկանալ. Ահա՝ սա է ճշմարիտ, իսկական մանկավարժական հմտութիւնը, իմաստութիւնը, որին չարգող ուսուցչին մնի ամօթ է և դպրոցին՝ վնաս.

Որպէսզի կրօնի ուսուցումն բարի պատող բերէ, ասացի պէտք է մանկան հոգւոց զարգացման ընթացքը օրէնքը ինկատի առնուի, այս կէտը խնդրի զլխաւոր պարագաներից մինն է, իսկ նիւթը, որով հոգին պիտի կերակրուի՝ ամի և զօրանայ, երկրորդ պարագան է: Հոգիկան զարգացումն նոյն պայմաններին է ենթարկուած, ինչ պայմանների որ մարմինը. Ինչպէս որ մարմինը ուտելով զարգանում է, նոյնպէս և հոգին իւր կերակրուն ունի, մտաւոր կերակրու: Ինչպէս որ ստամոքսը մարմնով զարգացման համար իրանից ոչինչ չէ կարող աւելացնել եթէ անհրաժեշտ սննդարար մասերը չէ ստանում, պասպէս է և հոգւոց վիճակը, եթէ նա կարևոր մտաւոր կերակրու չէ տանում: Հոգուն պէտք է որ զարգացնող նիւթերը զօրացնեն, աղնուացնեն և երկրուի միաւորութիւնից ցանկալի կրօնական պտուղը լառաջացնեն: Քրիստոնէական կրօնի ուսուցման նպատակը պէտք է լինի սաներին առաջնորդել, որ նրանք Սուրբ զիւրքը հասկանան և հայստանեաց եկեղեցւոց վարդապետութեանը քաջ գիտակ լինին, որպէսզի ի պահանջել հարկին նրանք ևս Գագիկ հանդիսանան: Սաներն այն աստիճան պիտի լառաջաղիւ-

մէին Սուրբ գրոց ուսման մէջ, որ իրանք կարողանան անկախ կերպով հասկանալ և եկեղեցում ժամերգութեան ժամանակ կենդանի մասնակցութիւն ունենալ: Կրօնի ուսուցումն ըստ Հայաստանեաց եկեղեցւոց վարդապետութեան բովանդակում է իւր մէջ—Սրբազն պատմութիւն, ընթերցմունք Սուրբ գրոց, մեկնութիւն Սուրբ գրոց, քրիստոնէական վարդապետութիւն, դաւանութիւն Հայաստանեաց եկեղեցւոց, եկեղեցական պատմութիւն, շարականներ, հոգեոր երգեր, աղօթքներ, և այլն. ըստ պատմնախ՝

ՍՐԲԱԶՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Սրբազն պատմութիւն ուսուցանելու նպատակ անթագութիւն անդամական պատմութիւններ այս կամ այն դասաստան մէջ ուրոշեալ պատմութիւններ ան դ ի ը գիտենան, այլ որպէսզի նորանով աշակերտները կրօնական կրթութիւն ստանան, որպէսզի նրանց զգացմոնքներն աղնուանան, կամքը ամրապնդուի և բարովական բնաւորութիւնը զօրանայ և հաստատուի: Կարծ ասած — Սրբազն պատմութիւնը չէ սահմանափակուած այս կամ այն դասաստան համար, նա կարող է նիւթ լինել և ստորին և բարձր դասաստանց համար, բաց ամենուրեք նա միշտ որպէս մ ի ջ ո ց պիտի ծառացէ նպատակ և անդամական համար—պարզ ասել, մեր միտքը չէ միայն Սրբազն պատմութիւն ուսուցանել, այլ Սրբազն պատմութիւնով պէտք է այս կամ այն բարովական, կրօնական դաղափարները տալ:

Կան անպիսի անհատներ, որոնք աւելորդ են համարում գալոցի մէջ Սրբազն պատմութեանն այն տեղը խալկացնել, որին նա իրօք արժանի է. եղան մարդիկ, որոնք մինչեւ անգամ «հրէից պատմութիւն», «փարաէլացւոց

աղջի պատմութիւն» անուանեցին, «Փարավելացոց ազգի պատմութեան» (Փարավէլացոց աղջի պատմութիւն և ոչ թէ Սրբազն պատմութիւն) ուսումնասիրութիւնը չափազանց մեծ ժամանակ է խլում (Հոգևոր դպրոցի մէջ) աշակերտներից՝ իվնաս միւս առարկաներից) կարծիք յասոնցին: Որքան բնական է այս միաքը կեղծ աղջամերների և սիրամարդի վետարներով զարդարուող զիտնականների համար, նոյնքան ցաւալի է հասկացող և բարեպաշտ անձի համար: Թողնենք այս անմիտիւր և նորաձեռութիւն դառած երևովները և բացատրենք այն հիմունքը, թէ ինչու հ ը է ի ց աղջի պատմութիւնը կրօնի սկրիճական ուսուցման հիմն ենք ընդունում:

ա, ¶ ատ մա կ ա ն ձեն այսուեղ կրօնի, էռութեանն ամենից շատ համապատասխան է: Աստուծոյ արքացութիւնը ոչ թէ միացն մի պատմութիւն է, ալլ նա ամբողջապէս, էականապէս պատմութիւն է: Եթէ մենք կամենավնք աշակերտներին Սուրբ գրոց պատմութիւնը զաղափարական ձեռվ աւանդել, որպիսին, տարաբարլաբար, սովորութիւն է մեր մէջ, այն ժամանակ ոչինչ չպիտի կարողանալիք հասկացնել և միան զատարկ իմաստներ և գաղափարներ¹⁾ տարով պիտի բաւականանավնք, որով և սահերին, քրիստոնէքութեան առաջին նահատակները պիտի դարձնէինք:

բ, Ամենան մի սերունդ և նորանով է բառաջ զնում որ ընդունում է այն բալոր բարի կոչուածները, որոնք իրանից առ ա ջ յապոնի էին. Այս նպատակի համար Սուրբ գրոց պատմութիւնն աննման է, (Աստուծոյ սուրբ կամքն ալսուեղ անքան պարզ է, անքան որոշ, ինչքան ոչ մի տեղ) որովհետեւ հրէից աղջը միենան ժամանակ կրօնի համար մի դաս ական աղջ է: Երբ ն ե ր գ ո ր ծ ա կ ա -

1) Բահաթըեանց -Մեթողիկա երես Յ:

ն ա պ է ս կրօնը այն ներքին կապն է, որով մենք և բոլոր իրերը Աստուծոյ հետ կապւում ենք և ա ն ձ ն ա կ ա ն ա պ է ս է նա կենդանի գիտակցութիւն աղդ կապակցութեան, այն ժամանակ աղդ ևս կատկած չէ մնում, որ հրէից աղջի գիտակցութիւնը դէպի: Աստուծած անքան զօրեղ և անքան կենդանի է, որքան ոչ մի ս զի մէջ: Եթէ լոյները ա ր ո ւ ե ս տ ի և հովվմակցիները ի ը ա ւ ո ւ ն ք ի ներկապացուցիչներ են, այն ժամանակ արդարութիւնը կը-վակնէ հրէից աղջին էլ Ա ս տ ո ւ ծ ո չ գ ա զ ա փ ա ր ն արտապատողի ներկապացուցիչ լինել: Երբ մինը ցանկանում է մի որ և է գիտութեան կամ արուեստի հետ հիմովին ծանօթանալ, որից միջոց չկաչ, բացի այն, որ նա ծանօթանալ նորա սկզբնաւորութեան և նորա զարգացման պատմութեան հետ: Դորա համար ևս արուեստասէրները իրանց ձաշակն ազնուացնելու, զարգացնելու համար լունաց արուեստի պատմութիւնն են ուսումնասիրում, իրաւաբանները՝ հովվմակցուց իրաւունքներն ուսանելը իրանց ուսման սկիզբն են ընդունում: Հենց դորա համար էլ կրօնուացը նախ պ ի տ ի ա ռ ա չ ն ո ր դ է զէպի հ ը է ի ց ա զ գ ի պ ա տ մ ո ւ թ ի ւ ն ը —ոչ իրը հրէից, ալ իրը սրբազն պատմութիւն, որովհետեւ կրօնը ամսաեղ է միան ներկաւանում մեղ իւր թանձրացեալ կերպարանքով, կենդանի պասակերով:

զ, Սուրբ պատմութեան մէջ նկարագրուած պատկերները անպատճի կենդանի գոնեներով են, որ հաղիւ թէ մի ուրիշ պատմութիւն իւր բատկութիւններով նորա զէմ միցող հանդիսանաց Այն օրհնութիւնները և բարեպաշտութիւններ և զայցա հակառակ այն պատիմները և անաստուածութիւններն, որոնք աղդ պատմութիւնների մէջ երեսն են գալի, հակելու նման պարզ են Ալդ պատմութիւններն այն աստիճան մանկական զգացման մօռ են և միենոն ժամանակ անքան որոշ են կրում կրօնական նշմարտութեան

Կելքը, որ հաղիւ թէ մինը իրաւունք համարէ իրան խօսելու դոցա դէմ, ապա ուրեմն և ամենայն իրաւամբ ընդունակ նկատող ականական կամաց կրօնի ուսուցման համար. Պատմութիւնն ու ուսուցումն, ուսուցումն և կեանքը, կրօնն ու բարուականութիւնը աչստեղ անքան սերտ շաղկապուած են միմեանց հետ, որի նմանը ուրիշ տեղ իդուր կինտուէինք—անտեղ երեռմէ է, որ ամենայն ինչ Աստուածանից՝ բարձրագոն էակիցն է կախուած, բայց և անպէս անքան պարզ, անքան մարդկային ողունք՝ բնականին չարմար ու միւնոն ժամանակ ամենին դիւրըմբոնելի, որ սրբազն պատմութիւնների մէջ ամենայն ոք իւր հոգեկան ներքին պատկերը հայելու պէս կարող է տեսնել.

Դ. Սրբազն պատմութիւնը ամենայարմարը համարուած է կրօնի սկզբնական դասաստուութեան համար ոչ միայն նորա համար, որ նորա անունը ուրբա զա ու ու ու ու բա տ մու թիւ ն է, որ նորա մէջ բարուական կրօնական մոգերը առատ են, զեղուն են, տպաւորութիւն կարող են թողնել, ավել նորա համար, որ անտեղ պատմութեան աւանդ ման ձեւ նկատողական է—կեանք ներշնչող. Անտեղ պատմում է ամենայն ինչ պարզ, սահուն, կոկիկ և բնական, կեղծ ոչինչ չկատ, ամենահին ժամանակների իրողութիւնները կարծես այսօր՝ ներկայումս քո աչքի առաջ պատահելիս լինին. Պատմութեան ձեռ ակտուեղ անքան սրտադին է, որ կարդալիս կամ լսելիս չես կարող բաւականութիւն չզգալ. Բառերի կազմութիւնը պարզ, մոգի հետեւողութիւնը որոշ, նախաղաստթեանց կապակցութիւնը դիւրըմբոնելի. Առանց հոեսարական պերճախօսութեան այդ պարզ լեզուն նկարագրում է մեղ բանաստեղծական ձևով նոն իսկ ամենափոքր զծերն անպիսի կենդանի կերպով և ծառութեամբ, որ ք ն ն ա դ ա տ ն ե ր ի հայրը՝ Լեսախնկ իւր բախնի գլուածքի

մէջ նունը խոստովանում է—«առւրբ գրոց պատմութիւններն անքան դասական են, որ իրավանչիւր առղի մէջ մի պատկեր նկարելու նիւթ կատ և այդ պատկերներն անքան սերտ կապուած են իրար հետ և անքան կատարեալ, որ նոցա մէջ մի ասեղ անգամ չի կարելի ցըցել»: Հնաց դորա համար էլ մենք կրօնի ուսուցման սկզբնական նիւթը այդ անհուն, այդ հարուստ աղբիւրն ենք ընտրում՝ բարմարուելով մանկավարժական պահանջներին, ինկատի առնելով սաների հասակը և զարգացման աստիճանը:

1888 ամիս

30 օ գ ո ս տ.

Տիեխիս



Դիմումը պահանջում է հաջողություն
ու վեճություն ու դա սպառա-
գի բարու ու առ այս ուժու-
թյան մատչել և առ այս առաջ-
այ ազգություն ու այս առաջ-

4

Տիմ 881

առ այս 01

Գի՞նն է 10 ԿՈՊԵԿ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0686208

